# 71 Ո՜հ, թե սուրբ ըլլամ ես՝ միշտ ալ ավելի,

1. Ո՜հ, թե սուրբ ըլլամ ես՝ միշտ ալ ավելի,
Սիրտս, հոգիս և միտքս Քեզ հնազանդին,
Օրեօր պարտքերս ավելի սիրով
Կատարեմ, ո՛վ Տերս, Քու Հոգվույդ շնորհքով:

2. Քու Հոգովդ, ո՛վ Հայրս, անդադար լեցուր,
Որ մաքուր ընե զիս, ավելի մաքուր,
Եվ իմ հառաչանքս դեպի վեր երթա,
Միշտ իմ պաղատանքս Աստուծոյս ըլլա:

3. Երբ շատնան վիշտերս, վախս ու տարակույս,
Ո՜հ, հանձնեմ հոգերս միշտ իմ Աստուծոյս,
Ինք բոլոր խավարս լույս պիտի ընե,
Ինչ որ հիմա մութ է, պիտի բացատրե:

4. Բարձր և ալ բարձր գիշերես թռչիմ,
Մինչ երկնից սուրբ լույսը բերկրությամբ հասնիմ,
Թող ըլլա մաղթանքս Քեզ ընդունելի,
Այս է, Տե՛ր իմ, ջանքս, Դուն օգնե՛ ինծի: